

Փարպեցի նախորդ էջերում խօսել է վարազվազանի վերայ, բայց ոչինչ չէ ասել նրա որդու մասին: Տրամադիր եմ կարգալ: « Զայս ամենայն չար իմացմունս անձին իւրում եւառակի իմացեալ », և այլն:

Այդ ածականի գործածութիւնը, պէտք է ասած՝ միակը չէ նոյն էջի վերայ: « Տեսիլ եւառակի եղեւ վարազվազան ամենայն տոհմի իւրոյ », « հանապազօր նշուակօք », և այլն:

7. « Ամսիտ է եւ լի է սպառնալուծեամբ ».

« Թէ տապացեալ ոք կարօտեսցի զուվանալոյ, և մատուցեալ զայն խնդրեսցէ զարձեալ ի Զերմութենէ՝ չպատահէ խրնդրոյն. այլ և խնդրողն յոյժ անմիտ հանաչի . . . անմիտ է և լի է սպառնալուծեամբ » (Փարպ. Դր. Բ. ԳԼ. Խ, էջ 41, տող 2):

Այստեղ սպառնալուծեամբ բառը անտեղի է. հարկ է նրան ուղղագրել « ապշուծեամբ »:

8. « Զստառմն գախու քամանայութեան ».

Ա. Դրուագի մէջ (ԳԼ. ԺԵ, էջ 33) գրում է Փարպեցի. « Եւ ընդ անկէ բեմբին՝ որ ցուցաւ քեզ աթոռ չորեքլուսի ծովագոյն սառնակերպ՝ զնստառմն գաշու քահանայութեան և թագաւորութեան ցուցանէ »:

Զնստառմն հարկ է սրբագրել « զնորդումն »: Հմմտ. էջ 34, տող 30. « Մերձ յերեւունս պղծոյն անապատի՝ զարձեալ յառնէ թագաւոր յազգէջ Արշակունեաց, և նորդի աթոռ քահանայապետութեան՝ ի շառաւիղէ սրբոյն Գրիգորի »:

9. « Զնիշտ պաշտաման տեսլին ».

Փարպ. (ԳԼ. Բ. էջ 2, տող 37) գրում է. « Զնիմելն առ նա սրբոյն Գրիգորի՝ գնէտ պաշտաման տեսլին, զնահատակութիւն նորին սրբոյն »:

Առաջարկում եմ կարդալ՝ ըստ հեշտ պաշտաման տեսլի:

10. « Նորդաստեպիլ մարդոց ».

Փարպ. (Ա. Դր. ԳԼ. Է. էջ 9) ասում է.

« Իսկ ի լանջակողմանն կամ ի սարահարթ տեղիս սփռեալ, յոր զիպեցուցեալ զհայեցած նորդաստեպիլ մարդոց՝ հանդերձս ինչ և ոչ ծաղկարոյս գոյն կարճեկուցանեն սփռեալքս պարարտարոյսը և պարարտաւորաց և պարարտահամը »:

Փոխանակ նորդաստեպիլ մարդոց պէտք է կարդալ այստեղ « նորդաստեպիլ մարդոց »:

Հ. ԳՐԱԳԻՐԻ, ԿԱՆԱԳԵՏԵԱՆ

Շարայրեկի

ՆՈՐ ՀԱՅԱԳԷՏ ՄԸ

Ուրախութեամբ կը ծանօթացնեք հայ բանասիրութեան զբաղողներու նոր հայագիտի մը երեւումը: Աւրիզիմոն Ռալմիկի օգոստոսեան քահանայն՝ իւր յօդածագիր և արեւելագետ մը հանչուած էր գուցէ մեր առևտարնակ ազգայիններէն, սակայն անցեալ տարւոյն մէջ անցուց իր գիտցած բազմաթիւ արեւելեան լեզուաց վրայ նաեւ հայերէնը. որ մեծ օգնութիւն պիտի ըլլայ իր հետազոտութեանց և քննական ուսումնասիրութիւններուն: Մինչև ցար. բազմամեծու գիտնական զբաղած էր առև, սլաւ, վրացի և յոյն ազգութիւններով և անոնց պատմութեամբ. հայերէն լեզուի ծանօթութիւնը նոր առաքելք մը պիտի բանայ իր ազգի՝ խաղարկութիւններու ու պատմական առեւելութեանց: Ընդհանրապէս հնագիտութեամբ և եկեղեցական պատմութեամբ պարապած կը գտնենք զինքը, ինչպէս կը վկայեն իտալիոյ, Գաղղիոյ ու Պեհիւոյ կրօնական թերթերու մէջ լոյս տեսած իր յօդածները, որոնց մէջ ցոյց կու տայ հմտութիւն ընդհանուր արեւելեան պատմութեան, աւանդութիւններու ու ծեսերու: Յիշեց միայն մի քանին՝ իր վերջին գրութիւններէն: 1. Բիւզանդական ուսումնասիրութիւնը ի Ռուսիա. 2. Վրաց եկեղեցիի և ամբողջ սկզբնաւորութիւնը. 3. Վրացիներ թարգմանութիւնը Առևտածաշնչի. 4. Սրբազան երաժշտութեան մոտրոգութիւնը ի Յունաստան. 5. Ռուսաց եկեղեցական գրականութիւնը. 6. Արգի Գուրգար եկեղեցի. 7. Ռուսմէ եկեղեցիի և ամբողջ գրականութիւնը. 8. Քրիստոնեայ հմախօսական բնկիրութիւնը յԱթէն. 9. Կեանք ապրիտի երկարքը՝ եթէ ամբողջական ցուցակ մը իր գրութեան յօդակներէ ըլլար մեր նպատակը. սակայն այսպիսի ցանկ մը այն աստի կարեւորութիւն պիտի ունենայ մեզ համար, երբ հայկական քննարկութիւններով ամ ճոխացած գտնենք իր յօդածները. — զայս կը մազթենք նոր հայագիտի:
